# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3.7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում 2023թ-ի դեկտեմբերի 29-ին կնքված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-1 ծածկագրով գնման պայմանագրում 2024թ-ի մայիսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ապրանքի մատակարարումն իրականացվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա: Անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրով նախատեսված մնացորդային 110000 լիտր ռեգուլյար բենզինի մատակարարման միավորի գինը նվազեցնել:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված մնացորդային 110000 լիտր ռեգուլյար բենզինի մատակարարման միավորի գինը սահմանվել է 490 ՀՀ դրամ և Պայմանագրի գինը նվազեցվել է 4 290 000 ՀՀ դրամով, այն սահմանվելով 112 090 000 ՀՀ դրամ, փոփոխվել է գնման Պայմանագրի վճարման-ժամանակացույցը և հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.13 կետի համաձայն Պայմանագրով նախատեսված մնացորդային 110000 լիտր ռեգուլյար բենզինի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ (ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշում) և Մաքս Օիլ» ՍՊԸ-ի գրությունը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 844-704:

Էլ. փոստ՝ gurgen_ghazaryan@taxcervice.am:

Պատվիրատու՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**

# Համաձայնագիր-3
# 29.12.2023թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «22» Հունիսի 2024թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ (Գնորդ), ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ.Մելքոնյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 29.12.2023թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը հետագա համագործակցության նպատակով որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 8.13 կետին համապատասխան հաստատել Պայմանագրով նախատեսված մնացորդային 110000 լիտր ռեգուլյար բենզինի մատակարարման ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Պայմանագրով նախատեսված մնացորդային 110000 լիտր ռեգուլյար բենզինի մատակարարման միավորի գինը սահմանել 490 ՀՀ դրամ և Պայմանագրի գինը նվազեցնել 4 290 000 ՀՀ դրամով, այն սահմանելով 107 800 000 ՀՀ դրամ:

1"3. Փոփոխել գնման Պայմանագրի վճարման-ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ /կցվում է/:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Մաքս Օիլ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Խորենացու 3,7 | ք.Երևան, Էրեբունի-12/4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011054013 | Հ/Հ 1570026452480100 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 02662703 |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար | «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Է.Գևորգյան | Կ.Մելքոնյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«29» դեկտեմբերի 2023թ. կնքված
N ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-1 գնման պայմանագրի փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2024թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը Տարի** |
| 1 | Բենզին ռեգուլյար | 4264 | | 20 906 500 | 20 906 500 | 37 775 900 | 37 775 900 | 37 775 900 | 81 087 000 | 81 087 000 | 81 087 000 | 107 800 000 | 107 800 000 | 107 800 000 | **107 800 000** |

*Վճարման գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Մաքս Օիլ» ՍՊԸ
ք.Երևան, Էրեբունի-12/4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026452480100
ՀՎՀՀ 02662703
«Մաքս Օիլ» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Կ.Մելքոնյան**
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ